



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

№ 1123-Ա/Ք

«10» 10 2011թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2915  
«ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 «Գազային սարքավորումների եվ ստորգետնյա գազատարների տեխնիկական

շահագործում» մասնագիտության «Գազային սարքավորումների շահագործման եվ նորոգման փականագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 «Գազային սարքավորումների եվ ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության «Գազային սարքավորումների շահագործման եվ նորոգման փականագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2012թ. սեպտեմբերի 1-ից:

3. Նախարարության աշխատակազմի նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչությանը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 2915 «Գազային սարքավորումների եվ ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության «Գազային սարքավորումների շահագործման եվ նորոգման փականագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/ ապահովել չափորոշի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:

5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՇՈՏՅԱՆ

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ  
2915 ՀՀ ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
<<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ>>  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն չափորոշիչը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 3-րդ մակարդակի <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:
2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝
  - 1) առկա,
  - 2) դրսեկության (էքստենսատ):
3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
  - 1) կրթության առկա ձևով՝
    - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 1 տարի,
    - բ. հիմնական կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի՝ 1 տարի,
    - գ. հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի:

2) դրսեկության (էքստենսատ) ձևով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենսատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով և հիմնական կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն ուսումնառող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1440 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2322 ժամ: Հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ  
2915. <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳԱԶԱՅԻՆ  
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ>>  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915<<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915<<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները.

1) ներբնակարանային, կոմունալ-կենցաղային կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի չափանշում, հավաքակցում (մոնտաժում) և տեղակայում,

2) ներբնակարանային, կոմունալ-կենցաղային կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի փորձարկում, շահագործում և սպասարկում,

3) ներբնակարանային, կոմունալ-կենցաղային կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի ստուգում, սարքահանում (ապամոնտաժում), ընթացիկ և կապիտալ նորոգում,

4) գազակարգավորման կետերի և կայանքների հավաքակցում (մոնտաժում), սպասարկում, նորոգում ու սարքահանում (ապամոնտաժում):

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորմամբ մասնագետի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

1) անհատ սպառողների (բնակիչների) ներբնակարանային գազային սարքավորումների չափանշումը, հավաքումը, հարմարեցումը, հավաքակցումը, փորձարկումը, շահագործումը, սպասարկումը, նորոգումը և սարքահանումը,

2) կոմունալ-կենցաղային կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի և գազակարգավորման կետերի ու կայանքների չափանշումը, հավաքումը, հարմարեցումը, հավաքակցումը, փորձարկումը, շահագործումը, սպասարկումը, նորոգումը և սարքահանումը,

3) գազային սարքավորումների անսարքությունների բացահայտումը և դրանք ծնող պատճառների վերացումը,

4) անհրաժեշտ գազափականագործական գործիքներ ընտրելը և դրանց ճիշտ օգտագործելը,

5) գազի բնութագրիչների (պարամետրերի) չափագրմանն անհրաժեշտ սարքերի և այլ նյութերի ընտրելն ու դրանց ճիշտ օգտագործելը,

6) կլանողական (աբսորբցիոն) գազազտիչների ճիշտ օգտագործումը,

7) եռակցման, հորատման, հավաքակցման, գամակարման, զոդման, սոսնձման և կապակցման ապարատների, գործիքների ու սարքերի ընտրելն՝ ըստ շինարարական հատակագծերի և նախագծերի,

8) գազափականագործական հարմարանքներ պատրաստելը,

9) գազային սարքավորումները ենթակարգաբերելը,

10) գազի հնարավոր արտահոսքերը բացահայտելը և դրանք վերացնելը,

11) տարբեր բարդության գազամատակարարման բաղադրամասերի և հանգույցների գազափականագործական մշակում կատարելը,

12) նոր գազային սարքավորումներ գործարկելը, լրահավաքելը, դրանք համապատասխան քայուղերով և այլ նյութերով հագեցնելը,

13) գազային սարքավորումների առանձին հանգույցները և ագրեգատները (աշխատամասերը) քանդելը, վնասված մասերը նորերով փոխարինելն ու դրանք վերստին հավաքելը,

14) բարձր ճշտություն պահանջող հավաքման տեխնոլոգիական գործընթացներ վարելը,

15) գազային սարքավորումների շահագործման և նորոգման տեխնիկական պահանջներն ու պայմանները խստագույնս պահպանելը,

16) այլ աշխատողներին ղեկավարելը,

17) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

### ԳԼՈՒԽ 3.

#### ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

2915. <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագիրն ավարտած շրջանավարտը պետք է.

- 1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ունենա ազգային ու համաշխարհային մշակույթի և պատմության վերաբերյալ գիտելիքներ,
- 2) ունենա մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, կարողանա դրանք կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում,
- 3) մասնագիտական գործիքները, սարքավորումները, հարմարանքները և նյութերը արդյունավետ և նպատակային օգտագործելու նպատակով կիրառի մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները,
- 4) ունենա մասնագիտական գործողությունները գործող նորմաների սահմաններում իրականացնելու հմտություններ,
- 5) ճիշտ ընկալի և կիրառի մասնագիտական տերմինաբանությունը,
- 6) ունենա մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,
- 7) ունենա մասնագիտական ինքնազարգացման և կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկություններն ընտրելու ու դրանք մասնագիտական աղբյուրներից ձեռք բերելու հմտություն,

- 8) ցուցաբերի աշխատանքային խնդիրների լուծման ընթացքում պատասխանատվություն ստանձնելու, հիմնավորված լուծումներ գտնելու կարողություն,
- 9) ունենա ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու հմտություն:

ԳԼՈՒԽ 4.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

2915. <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր ու հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտն ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1)ցուցաբերի << Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների ու նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների իմացություն,

2)տիրապետի հայոց լեզվին,

3)հաղորդակցվի առնվազն մեկ օտար լեզվով,

4)ցուցաբերի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին տիրապետելու կարողություն,

5) ցուցաբերի ազգային և համաշխարհային պատմության ու մշակույթի որոշակի իմացություն,

6)ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների ու գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7)տիրապետի էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությանը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթներին,

8)ցուցաբերի մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ,

9)պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին ու ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով ներկայացված առանցքային հմտություններին:

13.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ներկայացված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

#### ԳԼՈՒԽ 5.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2915.

<<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

14.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1)Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ՝ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում: Հատուկ



մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

2) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության «Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման ուսումնամեթոդական ապահովման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության «Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա) հայոց լեզվի,

բ) օտար լեզուների,

գ) լինգաֆոնային,

դ) ընդհանուր հումանիտար առարկաների,

ե) կենսագործունեության անվտանգության և առաջին օգնության,

զ) համակարգչային,

է) գծագրության,

ը) նյութագիտության:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա) գազային սարքավորումների և դրանց համակարգերի,

բ) չափիչ և ախտորոշիչ սարքերի,

գ) գազային տնտեսության:

3) Ուսումնական արհեստանոցների երաշխավորվող ցանկը՝

ա) գազափականագործական,

բ) եռակցման:

4) Սպորտային համալիր՝

ա) մարզադահլիճ,

բ) մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ:

17.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ դրսեկության (էքստեռնատ) ձևով ուսուցման դեպքում սահմանվում է ուսումնական պլաններով,
- 2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,
- 3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,
- 4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,
- 5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,
- 6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է՝ հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ.

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով.

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում,

ուսումնափորձնական տեղամասերում, հաստատության այլ ուսումնասօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում ու հաստատություններում:

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անցկացվում են պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակն՝ ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերին վերաբերող նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անցկացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ էլ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի ձեռք բերած կարողությունների ու հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

## ԳԼՈՒԽ 6.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

2915. <<ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳԱԶԱՅԻՆ

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և

հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915 <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այդ ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է որակավորման նկարագրին համապատասխան դրա ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով կազմի ու հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից, պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915. <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլները

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ>>**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Հ-3-11-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը :
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, բ. ճիշտ է ներկայացնում շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, գ. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, դ. շփման հնարավորությունն ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, ե. անձնական հատկանիշներն օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
<b>Ուսումնառության արդյունք 2.</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:

<b>Ուսումնառության արդյունք 3.</b>	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</p> <p>գ. նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները,</p> <p>դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p> <p>է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4.</b>	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ,</p> <p>բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>է. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5.</b>	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p>

	գ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԱՕ-3-11-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1.</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, բ. ըստ հիմնական բնագավառների, ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, ե. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, զ. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
<b>Ուսումնառության արդյունք 2.</b>	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),

	<p>գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3.</b>	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ցուցաբերել առաջին օգնություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը,</p> <p>գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>դ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>ե. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>զ. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,</p> <p>է. ներկայացնում է թունավորման տարբեր դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԳՀ-3-11-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ



	հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1.</b>	Փնտրել և գտնել աշխատանք
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն ը(CV) , դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
<b>Ուսումնառության արդյունք 2.</b>	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը, գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
<b>Ուսումնառության արդյունք 3.</b>	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և

	միջանձնային հարաբերությունների կարևորությունը, բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, գ. դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման , դ. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, ե. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահն անձնական շահից:
<b>Ուսումնառության արդյունք 4.</b>	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՕ-3-11-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի , գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարմակարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1 .</b>	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,</p> <p>բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենահանման սարք և այլն),</p> <p>դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
<b>Ուսումնառության արդյունք 2.</b>	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անհիմացիաներ և այլն:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3.</b>	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք,</p> <p>բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p>

	<p>գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն),</p> <p>դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>ե. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ :</p>
<b>Ուսումնառության արդյունք 4.</b>	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,</p> <p>բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>գ. գծագրում է կանոնավոր պատկերներ,</p> <p>դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենահանելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>զ. գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>է. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5.</b>	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</p> <p>բ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</p> <p>գ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>դ. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</p> <p>ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 6.</b>	Համացանցում աշխատելու իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է « համացանց » հասկացությունը,</p> <p>բ. օգտագործում է համացանցային հիմնական ծրագրերը,</p> <p>գ. ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p>

	գ. գրանցվում է էլեկտրոնային փոստում , համացանցային ծրագրերում և այլ կայքերում, է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղղարկում և ստանում տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
--	--

Աղյուսակ 2

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915. <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլները

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳԱԶԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողին տալ գիտելիքներ համաշխարհային և ազգային տնտեսությունների կառուցվածքում էներգետիկայի, մասնավորապես, գազարդյունաբերության դերի ու նշանակության, բնական գազի արդյունահանման ծավալի շարժընթացի, հիմնական արտահանող և ներկրող պետությունների, ինչպես նաև գազային տնտեսության կառուցվածքի մասին՝ միաժամանակ ձևավորելով վերլուծություններ, պարզաբանումներ, կանխատեսումներ ու գնահատումներ կատարելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Համաշխարհային (տարածաշրջանային, ազգային) տնտեսության կառուցվածքում արդյունաբերական համալիրի դերի և նշանակության իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները և զարգացման փուլերը,

	<p>բ. ճիշտ է բացատրում համաշխարհային տնտեսության կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում համաշխարհային տնտեսության տեղաբաշխման և զարգացման գործոնները,</p> <p>դ. ճիշտ է բնութագրում համաշխարհային արդյունաբերության բովանդակությունը և ճյուղային կառուցվածքը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Համաշխարհային վառելիքաէներգետիկ համալիրի դերի և նշանակության իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում համաշխարհային վառելիքաէներգետիկ համալիրի կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է բնութագրում գազարդյունաբերությունը, որպես վառելիքաէներգետիկ համալիրի առաջատար ենթաճյուղ,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում համաշխարհային գազարդյունաբերության առաջատար գազատար ավազանները և բնական գազի համաշխարհային արդյունահանման ծավալի շարժընթացը,</p> <p>դ. ճիշտ է թվարկում բնական գազի արդյունահանմամբ, արտահանմամբ և ներկրմամբ աշխարհի առաջատար պետությունները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում աշխարհի խոշորագույն գազախողովակաշարերը (գազամուղները),</p> <p>զ. ճիշտ է բնութագրում ջերմային էներգետիկայի զարգացման ուղղություններն ու հեռանկարներն աշխարհում:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բնական գազը, որպես բնապահպանական (էկոլոգիական) առումով ամենամաքուր էներգակիր ներկայացնելու իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է թվարկում վառելիքային բնական պաշարների (ռեսուրսների) հիմնական տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հիմնական էներգակիրների (վառելիքաէներգետիկ բնական պաշարների) ռեսուրսաապահովվածության տարածաշրջանային տարբերությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հիմնական էներգակիրների ջերմային գործակիցները և կատարում է դրանց արդյունավետության ճիշտ համեմատություն,</p> <p>դ. ճիշտ է բնութագրում բնական գազերի կարևորագույն ֆիզիկա-քիմիական հատկությունները,</p> <p>ե. ճիշտ է մեկնաբանում բնական գազի բնապահպանական առումով բարձր արդյունավետությունը և արդյունահանման համեմատաբար ցածր ինքնարժեքը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Գազային տնտեսության կառուցվածքի իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում <<գազային տնտեսության>> բովանդակությունը,

	<p>բ. ճիշտ է ներկայացնում գազային տնտեսության կառուցվածքային բաղադրիչները՝ գազամատակարար կազմակերպությունները և ենթակառուցվածքները, ինչպես նաև գազասպառող հիմնական օբյեկտները (ազգաբնակչություն, կոմունալ-կենցաղային կազմակերպություններ, արդյունաբերական ձեռնարկություններ),</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում գազամատակարար կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում գազասպառողների իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>ե. ճիշտ է բնութագրում Հայաստանի Հանրապետության գազային տնտեսության ժամանակակից կառուցվածքը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում &lt;&lt;Հայոուսգազարդ&gt;&gt; ՓԲԸ-ի դերակատարությունը և առաքելությունը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Բնական և արհեստական գազերի ու դրանց բնութագրերի իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում բնական և արհեստական գազերի ստացումը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում այրվող գազերի հիմնական բնութագրերն (ճնշում, ջերմաստիճան, խտություն, ջերմատարություն և այլ բնորոշիչ մեծություններ) ու գազերի այրման երևույթը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սպառվող գազի քանակությունների հաշվառման հետ կապված հարցերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում բնակարանների, թաղամասերի և բնակավայրերի գազի ծախսերի հաշվարկման հիմունքները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում բնակավայրի, թաղամասի և բակային ցանցերի ուղեգծերի ընտրությունը (ստորգետնյա և վերգետնյա ցանցեր),</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում փակուղային և օղակային ցանցերի տարբերությունները, խողովակազծերի տրամագծերի ընտրության հիմունքները:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել շրջապատող առարկայական և նյութական աշխարհի օբյեկտների ու երևույթների ընկալման և վերարտադրման տեխնիկական, շինարարական ու տեղագրական (տոպոգրաֆիական) գծագրության պարզագույն

	մեթոդները ներառող կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Գրաֆիկական (գծանկարչական) լեզվի իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է սահմանում &lt;&lt;գրաֆիկական տեղեկատվության&gt;&gt; բովանդակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գծագիր պատկերը, որպես իրականության արտացոլման մանրակերտ (մոդել),</p> <p>գ. ճիշտ է թվարկում գծանկարչական պատկերների տեսակները,</p> <p>դ. ճիշտ է մեկնաբանում գրաֆիկական լեզվի դերն ու նշանակությունը գրաֆիկական համընդհանուր մշակույթի համատեքստում,</p> <p>ե. ճիշտ է բացատրում գրաֆիկական տեղեկատվության կարևորությունը մասնագիտական գործունեության բնագավառում,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում նախագծային փաստաթղթավորման միասնական համակարգի (ՆՓՄՀ-ը) կանոնները և պահանջները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Գծանկարչական և գծագրական պատկերների կառուցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում պրոյեկտման՝ հարթության (թղթի) վրա տարածաչափական մարմինների և հարթաչափական պատկերների չափի ու ձևի գրաֆիկական եղանակով փոխանցման առանձնահատկությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հորիզոնական պրոյեկտման եղանակը, կառուցում է պարզագույն երկրաչափական պատկերների ու մարմինների հորիզոնական պրոյեկցիաներ,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ուղղահայաց պրոյեկտման եղանակը, կառուցում է պարզագույն երկրաչափական պատկերների ու մարմինների ուղղահայաց պրոյեկցիաներ,</p> <p>դ. ճիշտ է կառուցում հարթ պատկերների հավասարաչափական (իզոմետրիական) պրոյեկցիաները,</p> <p>ե. ճիշտ է կառուցում բազմանիստների և պտտվող մարմինների ուղղանկյուն պրոյեկցիաները,</p>



	<p>գ. ճիշտ է վերլուծում առարկաների երկրաչափական ձևի առանձնահատկություններն՝ ըստ դրանց պրոյեկցիաների, տեխնիկական գծանկարների և էսքիզների,</p> <p>է. ճիշտ է օգտագործում և կիրառում գծագրական գործիքներն ու պարագաները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ընդհանուր բնույթի գծագրերի գծանկարում և ընթերցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է սահմանում &lt;&lt;հատակագիծ&gt;&gt; հասկացությունը, ներկայացնում է դրա պայմանանշանային համակարգը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում սահմանափակ փոքր տարածքի հատակագծման կանոնները, կառուցում է պարզագույն հատակագծեր,</p> <p>գ. ճիշտ է սահմանում &lt;&lt;մասշտաբ&gt;&gt; հասկացությունը, կառուցում է պարզագույն գծագրեր՝ ըստ նախապես տրված մասշտաբի,</p> <p>դ. ճիշտ է գծանկարում առանձին մանրամասնությունների (դետալների) էսքիզները և գծագրերը,</p> <p>ե. ճիշտ է կառուցում կտրվածքների, հատվածքների, փորվածքների և տաշվածքների պարզագույն գծագրերը,</p> <p>զ. ճիշտ է օգտագործում գծագրերի ձևավորման կանոնները՝ ՆՓՄՀ, ձևաչափ, հիմնական մակագրություն, տառաձև, ստվերարկում, հատվածաբաժանում, գունաբաժանում և այլն,</p> <p>է. ճիշտ է ընթերցում գծագրերը՝ վերարտադրելով տարբեր մանրամասնությունների առանձնահատկությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ճարտարապետա-շինարարական գծագրերի գծանկարում և ընթերցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է սահմանում &lt;&lt;տեղագրական քարտեզ&gt;&gt; հասկացությունը, ներկայացնում է դրա հիմնական տարբերությունը հատակագծից,</p> <p>բ. ճիշտ է ընթերցում տեղանքի տեղագրական քարտեզը և դրանում օգտագործվող պայմանանշանային համակարգի բացատրագիրը (լեգենդը),</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում Տեխնոլոգիական փաստաթղթավորման միասնական համակարգի (ՏՓՄՀ-ը) պետական չափորոշիչներից բխող պահանջները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում Գլխավոր հատակագծի (Գենպլանի) մանրամասները և կազմում է աշխատանքային գծագրեր,</p> <p>ե. ճիշտ է պարզաբանում գծագրական տարատեսակ մանրամասնությունները,</p>

	<p>գ. ճիշտ է կառուցում կետի, ուղղի և հարթության պրոյեկցիաները,</p> <p>է. ճիշտ է կառուցում բնակարանների, շենքերի և շինությունների հատակագիծ-գծագրերը՝ դրանցում անցկացնելով ջերմամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման ու ջրամատակարարման հոսքագծերը,</p> <p>ը. ճիշտ է կազմում գազախողավակաշարերի սխեմաները և գազասարքավորումների պարզագույն գծանկարները:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՋԵՐՄԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ , ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ, ՍԱՐՔԵՐՆ ՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՀ 3-11-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել էլեկտրատեխնիկայի վերաբերյալ համապարփակ գիտելիքներ և դրանք մասնագիտական գործունեության բնագավառում կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Էլեկտրականության մասին համընդհանուր պատկերացման ձևավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բացատրում մարմինների էլեկտրականացման երևույթը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրական լիցքերը և լիցքավորված մարմինների փոխազդեցությունը,</p> <p>գ. ճիշտ է սահմանում &lt;&lt;էլեկտրական դաշտ&gt;&gt; և &lt;&lt;էլեկտրական ուժ&gt;&gt; հասկացությունները, ներկայացնում է Շ. Կուլոնի օրենքը,</p> <p>դ. ճիշտ է բացատրում էլեկտրական երևույթների բովանդակությունը և առանձնահատկությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Հաստատուն էլեկտրական հոսանքի մասին իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է սահմանում &lt;&lt;էլեկտրական հոսանք&gt;&gt; հասկացությունը և ներկայացնում է դրա ստացման աղբյուրները (էլեկտրակիր մեքենա, ջերմաէլեմենտ, լուսաէլեմենտ, գալվանական էլեմենտ, էլեկտրական ակումուլյատոր, գեներատոր),</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրական շղթան և դրա բաղադրիչները,</p>

	<p>գ. ճիշտ է բացատրում հաջորդական միացմամբ էլեկտրական շղթան և գծանկարում է դրա սխեման՝ ըստ կիրառվող պայմանանշանների,</p> <p>դ. ճիշտ է բացատրում զուգահեռ միացմամբ էլեկտրական շղթան և գծանկարում է դրա սխեման՝ ըստ կիրառվող պայմանանշանների,</p> <p>ե. ճիշտ է սահմանում Գ. Օհմի օրենքը, կատարում է հոսանքի ուժի (ամպերմետրով) և լարման (վոլտմետրով) ճշգրիտ չափումներ,</p> <p>զ. ճիշտ է հաշվարկում էլեկտրական հոսանքի աշխատանքը շղթայի տեղամասում,</p> <p>է. ճիշտ է հաշվարկում էլեկտրական հոսանքի հզորությունը շղթայի տեղամասում:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Էլեկտրական հոսանքի ջերմային ազդեցության մասին իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է նկարագրում էլեկտրական հոսանքի ջերմային ազդեցությունը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում էլեկտրական հոսանքով մետաղե հաղորդիչների տաքացման (ջերմացման) ընթացքն՝ ըստ Ջոուլ-Լենցի օրենքի,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում շիկացման լամպի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաջեռուցիչ սարքերի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում էլեկտրաեռակցման սարքերի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</p> <p>զ. ճիշտ է բացատրում կարճ միացման պատճառները և դրանից խուսափելու կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Էլեկտրական սարքերի և մեքենաների մասին իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում հոսանքափոխարկիչների (տրանսֆորմատորների) կառուցվածքը, դրանց տեսակները, նշանակությունը և կիրառությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրակուտակիչների (կոնդենսատորների) կառուցվածքը, դրանց տեսակները, նշանակությունը և կիրառությունը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում գեներատորների (մեխանիկական էներգիան էլեկտրականի փոխարկող մեքենաների) կառուցվածքը, դրանց տեսակները, նշանակությունը և կիրառությունը,</p>

	դ. ճիշտ է ներկայացնում տարածամանակյա (ասինխրոն) շարժիչների կառուցվածքը, դրանց տեսակները, նշանակությունը և կիրառությունը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ՎԱՌԵԼԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՇԵՍԱԿԱՆ ԳԱԶԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-004
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել նյութերի և դրանց հատկությունների մասին համապարփակ գիտելիքներ, ինչպես նաև դրանցով աշխատելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԳՍՇ 3-11-001 <<Գազային տնտեսություն>> մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Նյութագիտության ուսումնասիրության առարկայի իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում նյութագիտության ուսումնասիրության առարկան, բ. ճիշտ է բացատրում նյութերի կառուցվածքը, գ. ճիշտ է ներկայացնում նյութերի ագրեգատային վիճակները (պինդ, հեղուկ, գազային), դ. ճիշտ է բացատրում նյութերի ագրեգատային վիճակների փոփոխությունները՝ հալման և բյուրեղացման երևույթները, ե. ճիշտ է կառուցում բյուրեղային մարմինների հալման և պնդացման գրաֆիկները, զ. ճիշտ է սահմանում <<հալման տեսակարար ջերմություն>> հասկացությունը, է. ճիշտ է բացատրում գոլորշիացման և խտացման երևույթները, ինչպես նաև դրանցով պայմանավորված էներգիայի կլանումն ու անջատումը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ջերմային երևույթների և դրանց առանձնահատկությունների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում ջերմային շարժման ընթացքը, մատնանշում է ջերմային երևույթների բավարար թվով օրինակներ, բ. ճիշտ է բացատրում մարմնի ներքին էներգիան և դրա փոփոխման եղանակները,

	<p>գ. ճիշտ է բացատրում ջերմահաղորդականության երևույթը մետաղներում, հեղուկներում և գազերում, մատնանշում է բնության մեջ ու տեխնիկայում ջերմահաղորդման բավարար թվով օրինակներ,</p> <p>դ. ճիշտ է սահմանում &lt;&lt;ջերմաքանակ&gt;&gt; և &lt;&lt;տեսակարար ջերմունակություն&gt;&gt; հասկացությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Վառելիքի տեսակների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում վառելիքային պաշարների (ռեսուրսների) տեսակները և դրանց առաջացման պայմանները, սահմանում է &lt;&lt;պայմանական վառելիք&gt;&gt; հասկացությունը,</p> <p>բ. ճիշտ է սահմանում &lt;&lt;վառելիքի այրման տեսակարար ջերմություն&gt;&gt; հասկացությունը, կատարում է վառելիքի լրիվ այրման դեպքում անջատվող ջերմաքանակի ճիշտ հաշվարկներ,</p> <p>գ. ճիշտ է բացատրում էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը ջերմային երևույթներում,</p> <p>դ. ճիշտ է սահմանում &lt;&lt; շոգեգոյացման տեսակարար ջերմություն&gt;&gt; հասկացությունը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում առավել լայն տարածում գտած ջերմաշարժիչների՝ ներքին այրման շարժիչի և տուրբինի կառուցվածքն ու աշխատանքային սկզբունքները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բնական և արհեստական գազերի ջերմադինամիկական բնութագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում գազերի կառուցվածքը և դրանցում մոլեկուլների փոխազդեցության առանձնահատկությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում բնական և արհեստական գազերը, դրանց նմանություններն ու տարբերությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում բրոունյան շարժումը և դիֆուզիային երևույթը գազերում,</p> <p>դ. ճիշտ է պատկերացնում Ավոգադրոյի թիվը, նյութի քանակը, մոլային զանգվածը և ծավալը,</p> <p>ե. ճիշտ է բացատրում գազային հիմնական՝ Բոյլ-Մարիոտի (առաջին գազային օրենք), Գեյ-Լյուսակի (երկրորդ գազային օրենք) և Ժ. Շարլի (գազային երրորդ օրենք) օրենքներն ու դրանց համապատասխան իզոթերմ, իզոբար և իզոխոր երևույթները,</p> <p>զ. ճիշտ է բացատրում իրական և իդեալական գազի առանձնահատկությունները՝ ներկայացնելով դրանց վիճակի հավասարումները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ջերմադինամիկայի առաջին և երկրորդ օրենքները:</p>

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գազերի և գազային խառնուրդների ընդհանրացված բնութագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բնութագրում գազերի ճնշումը, ջերմաստիճանը և ծավալը, կատարում է պարզագույն հաշվարկներ,</p> <p>բ. ճիշտ է բացատրում գազերի սեղմելիությունը, ներկայացնում է դրանց սեղմելիության գործակիցները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում գազային խառնուրդները, դրանց խտությունը և մածուցիկությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում գազերի խոնավությունը և դրա որոշման մեթոդները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում տարբեր գազերի և գազային խառնուրդների այրման ջերմաստիճանները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում այրվող գազերի չորացումը և հոտավետությունը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում թունավոր գազերը և դրանց հայտնաբերման մեթոդները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Մետաղների, համաձուլվածքների և պոլիմերների ընդհանրացված բնութագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում մետաղների բյուրեղային կառուցվածքը և դրանց բյուրեղային ցանցերի տեսակները,</p> <p>բ. ճիշտ է բացատրում մետաղների հակակոռոզիոն դիմակայության գնահատման մեթոդները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մետաղների ալոտրոպիկ (այլավիճակ) ձևափոխությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում համաձուլվածքների ստացման եղանակները, բացատրում է դրանց վիճակի գծապատկերները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում թուջի (չուգունի), ծանր և թեթև տարբեր համաձուլվածքների ֆիզիկա-մեխանիկական հատկություններն ու դրանց կիրառության ոլորտները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում ոչմետաղային նյութերի, մասնավորապես, քիմիական տեխնոլոգիայով ստացվող պոլիմերների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները և դրանց կիրառության ոլորտները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում էլեկտրատեխնիկական և կառուցվածքա-շինարարական նյութերը, դրանց կիրառության ոլորտները:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՁԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԳԾԱՅԻՆ, ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՅԼ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-005
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել չափագիտությանն առնչվող ընդհանուր գիտելիքներ և դրանք մասնագիտական գործունեության բնագավառում կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ

<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԳՍՇ 3-11-002 <<Տեխնիկական գրաֆիկա>>, ԳՍՇ 3-11-003 <<Էլեկտրական հոսանքը և դրա ջերմային ազդեցությունը, էլեկտրական երևույթները, սարքերն ու մեքենաները>> և ԳՍՇ 3-11-004 <<Նյութագիտություն: Վառելիքի տեսակները, բնական և արհեստական գազերը>> մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Չափագիտության ուսումնասիրության առարկայի և խնդիրների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում և ներկայացնում չափագիտության ուսումնասիրության առարկան, բ. ճիշտ է ներկայացնում չափման ենթակա ֆիզիկական մեծություններն ու դրանց չափողականությունը, գ. ճիշտ է ներկայացնում չափումների Միջազգային համակարգը ( SI ) և դրանում տեղ գտած չափման միավորները, դ. ճիշտ է ներկայացնում <<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենքի հիմնադրույթները, ե. ճիշտ է մեկնաբանում չափագիտության հիմնական սահմանումները, հասկացություններն ու եզրույթները (տերմինները), զ. ճիշտ է բնութագրում ժամանակակից չափագիտության խնդիրները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Գծային մեծությունների չափման միջոցների և մեթոդների իմացություն, չափումների գործնական կատարում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է թվարկում չափման ենթակա գծային մեծությունները (երկարություն, լայնություն, բարձրություն, մակերես, ծավալ), բ. ճիշտ է ներկայացնում գծային չափումներում կիրառվող չափագրական գործիքներն ու սարքերը (մետաղաձողաչափ, միկրոմետր, տրամաչափիչ, կորաքանոն, ստուգիչ ուղղալար, ստուգիչ սալաքար և այլն), գ. ճիշտ է ներկայացնում գծային չափումների սանդղակը, վերջինիս բաժանմունքները, բաժանմունքի արժեքը, սկզբնական և վերջնական ցուցանիշները, չափագրման լայնույթն (դիապազոն) ու միջակայքը, դ. ճիշտ է առանձնացնում գծային չափումների ուղղակի և անուղղակի (միջնորդավորված) տեսակները, ե. ճիշտ է սահմանում չափումների սխալմունքի հավանականությունը, դրա բացարձակ և հարաբերական արժեքները, զ. ճիշտ է ներկայացնում չափումների թույլատրելի առավելագույն սխալմունքի սահմանները, է. ճիշտ է կատարում հանձնարարված գծային չափումները:

<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Անկյունային մեծությունների չափման միջոցների և մեթոդների իմացություն, չափումների գործնական կատարում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում չափման ենթակա անկյունային մեծությունները՝ ներքին և արտաքին անկյուններն ու դրանց տարբերությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում անկյունային չափումներում կիրառվող չափագրական գործիքները (ՄՄ, ՄԻ),</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում անկյունաչափերի սանդղակը և վերջինիս բաժանմունքների արժեքը, սկզբնական ու վերջնական ցուցանիշները, չափագրման լայնույթը և միջակայքը,</p> <p>դ. ճիշտ է սահմանում անկյունային չափումների սխալմունքի հավանականությունը և դրա թույլատրելի առավելագույն սահմանները,</p> <p>ե. ճիշտ է կատարում հանձնարարված անկյունային չափումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների ֆիզիկական մեծությունների չափումների գործնական կատարում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների չափագրելի ֆիզիկական մեծությունները,</p> <p>բ. ճիշտ է չափում բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների խտությունը,</p> <p>գ. ճիշտ է չափում բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների դինամիկ և կինեմատիկ մածուցիկությունները,</p> <p>դ. ճիշտ է չափում բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների ջերմահաղորդականության գործակիցները,</p> <p>ե. ճիշտ է չափում բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների ջերմունակությունը,</p> <p>զ. ճիշտ է չափում բնական և արհեստական գազերի ու գազախառնուրդների ջերմաստիճանահաղորդականությունը,</p> <p>է. ճիշտ է հաշվարկում չափումների արդյունքների միջին թվաբանական և միջին երկրաչափական ցուցանիշները:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել կենսագործունեության անվտանգության հիմնադրույթների իրականացման և ապահովման մասին համապարփակ գիտելիքներ ու դրանք աշխատանքային միջավայրում գործնականորեն կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ 3-11-001



	<<Անվտանգություն և առաջին օգնություն>>, ԳՍՇ 3-11-001 <<Գազային տնտեսություն>> և ԳՍՇ 3-11-003 <<Էլեկտրական հոսանքը և դրա ջերմային ազդեցությունը, էլեկտրական երևույթները, սարքերն ու մեքենաները>> մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կենսագործունեության անվտանգության առաջնահերթությունների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է պատկերացնում կենսագործունեության անվտանգության կարևորությունն ու անհրաժեշտությունն առօրյա կյանքում, բ. ճիշտ է ներկայացնում կենսագործունեության անվտանգության կարևորությունն ու անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության բնագավառում, գ. ճիշտ է ներկայացնում կենսագործունեության անվտանգությանը սպառնացող վտանգներն արտակարգ իրավիճակների պայմաններում, դ. ճիշտ է ներկայացնում կենսագործունեության անվտանգության խաթարման և խափանման բացասական հետևանքները, ե. ճիշտ է մեկնաբանում կենսագործունեության անվտանգության ապահովման համապետական միջոցառումների շարքը, զ. ճիշտ է բնութագրում կենսագործունեության անվտանգության կազմակերպման առաջնահերթ և հրատապ միջոցառումները, դրանց իրավական ու կազմակերպչական հիմքերը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կենսագործունեության անվտանգության ապահովման տեխնիկական նորմերի, կանոնների և նախազգուշական միջոցառումների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում կենսագործունեության անվտանգության ապահովման տեխնիկական նորմերը և դրանցից բխող՝ յուրաքանչյուր քաղաքացու պատասխանատվությունը, բ. ճիշտ է ներկայացնում կենսագործունեության անվտանգության ապահովման կանոնները և դրանցից բխող՝ յուրաքանչյուր քաղաքացու իրազեկվածության նվազագույն մակարդակը, գ. ճիշտ է ներկայացնում անհատ զազասպառողների կողմից գազա և էլեկտրատեխնիկական սարքավորումների

	<p>շահագործման անվտանգության տեխնիկա-տեխնոլոգիական պահանջները,</p> <p>դ. ճիշտ է առանձնացնում կոլեկտիվ գազասպառողների կողմից գազա և էլեկտրատեխնիկական սարքավորումների շահագործման անվտանգության տեխնիկա-տեխնոլոգիական պահանջները,</p> <p>ե. ճիշտ է սահմանում անհատ և կոլեկտիվ գազասպառողների գազաանվտանգության կանոններն ու պաշտպանությունը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում անհատ և կոլեկտիվ գազասպառողների էլեկտրաանվտանգության ու հրդեհաանվտանգության կանոնները և պահանջները,</p> <p>է. ճիշտ է սահմանում տարբեր տեսակի վտանգների դեպքում դրանց հետևանքների նվազեցմանն ուղղորդված նախազգուշական միջոցառումներն՝ ըստ արդյունավետության:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կենսագործունեության անվտանգության և արտակարգ իրավիճակների պայմաններում արտադրական սանիտարիայի ու հիգիենայի պաշտպանական միջոցների և միջոցառումների իմացություն</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է տարանջատում արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գազասարքերի շահագործման միջավայրի միկրոկլիմայի՝ օդափոխության, ջերմաստիճանափոխության և խոնավափոխության նկատմամբ ներկայացվող պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեղակայված գազասարքերը ցնցումներից, հարվածներից և տեղաշարժերից պաշտպանելու միջոցներն ու միջոցառումները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում գազասարքերի տեղակայման տեղամասերի լուսավորվածության ապահովմանը ներկայացվող պահանջները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում արտակարգ իրավիճակների պայմաններում բոցածին և հրդեհածին օջախների մարման սկզբնական գործելաձևերը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում հնարավոր տեխնածին արտակարգ իրավիճակների և տարրերային երևույթների մոտավոր պատկերը՝ ներկայացնելով դեպքերի զարգացման ու դրանց հետևանքների կանխատեսման սկզբունքները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Կենսագործունեության անվտանգությանը փաստացի սպառնացող իրավիճակում հայտնված տուժողին (տուժողներին) առաջին օգնություն ցուցաբերելու միջոցառումների ուրվագծում</p>

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում տուժողի կարգավիճակում հայտնված(ներ)ի անվտանգությանը սպառնացող վտանգավոր գործոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տուժողի կարգավիճակում հայտնված(ներ)ի անվտանգությանը սպառնացող վնասակար գործոնները,</p> <p>գ. ճիշտ է ախտորոշում տուժողի կարգավիճակում հայտնված(ներ)ի վնասվածքները և պատկերացնում է դրանք հնարավորինս արդյունավետ մեղմելու գործողությունների շարքը,</p> <p>դ. ճիշտ է կազմակերպում տուժողի կարգավիճակում հայտնված(ներ)ի առաջին բուժօգնությունը,</p> <p>ե. ճիշտ է գնահատում ստեղծված իրավիճակի վտանգավորության աստիճանը (մակարդակը),</p> <p>զ. ճիշտ է կողմնորոշվում ստեղծված արտակարգ իրավիճակում՝ հնարավորինս արագ կազմակերպելով շտապ բուժօգնության մասնագիտական ծառայություն,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում մասսայական ոչնչացման զենքի և ահաբեկչության վտանգավորությանը հակազդելու հնարքները:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-007
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել փականագործական սարքերի, գործիքների և աշխատանքների մասին ընդհանրացված գիտելիքներ ու դրանք մասնագիտական գործունեության բնագավառում դրսևորելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԸԱՀ 3-11-001 <<Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ>>, ՀՂՀ 3-11-001 <<Հաղորդակցության հմտություններ>>, ԳՍՇ 3-11-001 <<Գազային տնտեսություն>>, ԳՍՇ 3-11-002 <<Տեխնիկական գրաֆիկա>>, ԳՍՇ 3-11-005 <<Չափագիտություն: Գծային, անկյունային և ֆիզիկական այլ մեծություններ>> և ԳՍՇ 3-11-006 <<Կենսագործունեության անվտանգություն>> մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է

<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Աշխատաշուկայի գործող իրողության պայմաններում գազափականագործի տեղի, դերի և պահանջվածության իմացություն:
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատաշուկայի ձևավորման սկզբունքները և դրանց վրա ազդող գործոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում սեփական ապագա մասնագիտության (գազափականագործության) էությունը և սոցիալական նշանակությունը,</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում ընտրած մասնագիտության (գազափականագործության) նկատմամբ սեփական հետաքրքրությունը,</p> <p>դ. ճիշտ է պատկերացնում գազափականագործի մասնագիտական գործունեության խնդիրները,</p> <p>ե. ճիշտ է պատկերացնում գազափականագործի աշխատանքային գործառույթներին ներկայացվող պահանջները,</p> <p>զ. ճիշտ է բնութագրում գազափականագործի տեղը և դերը ՀՀ աշխատաշուկայի առկա իրողության պայմաններում,</p> <p>է. ճիշտ է բնութագրում գազափականագործի տեղը և դերը տնտեսության սպասարկման ոլորտի համընդհանուր կառուցվածքում:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Գազափականագործական աշխատանքային գործառույթների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է թվարկում գազափականագործական հիմնական աշխատանքային գործառույթները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հիմնական գազային սարքավորումների տեսակները և դրանց կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հիմնական գազային սարքավորումների աշխատանքային սկզբունքները,</p> <p>դ. ճիշտ է նկարագրում գազային սարքավորումների շահագործման տեխնիկական պահանջները,</p> <p>ե. ճիշտ է նկարագրում գազային սարքավորումների և դրանց համակարգերի չափանշման ու հավաքակցման (մոնտաժման) աշխատանքները,</p> <p>զ. ճիշտ է նկարագրում գազային սարքավորումների և դրանց համակարգերի տեղակայման ու փորձարկման աշխատանքները,</p> <p>է. ճիշտ է նկարագրում գազային սարքավորումների և դրանց համակարգերի շահագործման ու սպասարկման աշխատանքները,</p> <p>ը. ճիշտ է նկարագրում գազային սարքավորումների և դրանց համակարգերի ստուգման ու նորոգման աշխատանքները,</p> <p>թ. ճիշտ է նկարագրում գազային սարքավորումների և դրանց համակարգերի սարքահանման (ապամոնտաժման)</p>

	աշխատանքները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Փականագործական աշխատանքների տեխնոլոգիայում ընդունված բանվորական գործողությունների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում չափանշման, կտրման, հղկման, գայլիկոնման, պարուրակահանման, անցալայնացման, եզրալայնման,</p> <p>ծոման, գամման սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է կատարում չափանշման, կտրման, հղկման, գայլիկոնման, գամման և զողման աշխատանքները՝ տրված բանվորական գծագրերին համապատասխան,</p> <p>գ. ճիշտ է հայտնաբերում և վերացնում բանվորական հնարքների կատարման ժամանակ թույլ տված թերությունները,</p> <p>դ. ճիշտ է տարբերակում խողովակների տեսակներն՝ ըստ արտաքին տեսքի և մակնիշավորման,</p> <p>ե. ճիշտ է ընտրում խողովակների միացման դետալները և նյութերը՝ բացատրելով դրանց բնութագրերն և գործառնությունները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում փականային հանգույցները՝ կատարելով դրանց փոխարինման կամ վերանորոգման աշխատանքները,</p> <p>է. ճիշտ է կատարում խողովակների ձեռքով, մեխանիկական եղանակով, ջերմային կցմամբ հարմարեցման աշխատանքները,</p> <p>ը. ճիշտ է նախապատրաստում խողովակները՝ դրանք եռակցման համար համակենտրոն դիրքի բերելով,</p> <p>թ. ճիշտ է կատարում խողովակների միացումային դետալների փորձարկումն՝ ըստ ամրության և կիպության:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Փականագործական-հավաքման գործիքների իմացություն և դրանցով աշխատելու կարողությունների ձևավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է պատկերացնում փականագործական-հավաքման աշխատանքները (հանգուցային հավաքում, ընդհանուր հավաքում, բաղադրիչ տարրերի միացում, բաղադրիչ տարրերի չափաբերում և այլն),</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում փականագործա-միացման ձեռքի գործիքները (մանեկի դարձակ, պտուտակիչ, սովորական և փափուկ մուրճ, կալակ և այլն),</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում փականագործա-միացման մեխանիկական գործիքները (պնևմատիկ և էլեկտրական</p>

	<p>պարուրակիչներ, էլեկտրամուրճ, մամլակցման չափոց, գամելու փոխադրովի չափոց և այլն),</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում փականագործա-չափաբերման գործիքները (խարտոց, քերան, կիպահղկիչ, հատիչ, գայլիկոն, անցքակոկիչ և այլն),</p> <p>ե. ճիշտ է ցուցադրում փականագործական-հավաքման գործիքներից յուրաքանչյուրի կիրառությունը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գազասարքավորումների մոնտաժման տեխնոլոգիայի իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում գազասարքավորման և շինարարական կոնստրուկցիաների փոխադարձ դիրքը,</p> <p>բ. ճիշտ է նախապատրաստում շինարարական կոնստրուկցիաները գազասարքավորման տեղադրման պահանջների բավարարման տեսանկյունից,</p> <p>գ. ճիշտ է կատարում գազասարքավորումների միացումը նոր մոնտաժված կամ գործող գազամատակարարման ցանցերին,</p> <p>դ. ճիշտ է ստուգում և կարգաբերում նոր տեղադրված կամ գործող սարքավորումների աշխատանքը՝ գազի նորմալ այրումն ապահովելու տեսանկյունից,</p> <p>ե. ճիշտ է ստուգում և կարգաբերում ծխագազերի հեռացման համակարգերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Մասնագիտական գործունեության և աշխատանքի արդյունքի որակի ապահովման հիմքերի, ինչպես նաև անհատական պաշտպանության միջոցների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է վերլուծում աշխատանքային իրավիճակը,</p> <p>բ. ճիշտ է պատկերացնում իր առջև դրված աշխատանքային խնդիրը և այն արդյունավետ լուծելու անհրաժեշտ գործողությունները,</p> <p>գ. ճիշտ է իրականացնում սեփական մասնագիտական որակները կատարելագործելուն ուղղորդված անհրաժեշտ տեղեկատվության որոնումն ու հավաքագրումը,</p> <p>դ. ճիշտ է կիրառում սեփական մասնագիտական որակները բարձրացնելուն միտված տեղեկատվական տեխնոլոգիաները,</p> <p>ե. ճիշտ է գնահատում սեփական աշխատանքային գործունեությունը և վերադասավորում է այն՝ ըստ իրավիճակի,</p>

	<p>գ. ճիշտ է գնահատում և ստուգում սեփական աշխատանքի վերջնարդյունքը,</p> <p>է. ճիշտ և հարգալից է հարաբերվում հաճախորդների հետ՝ նրանց տրամադրելով գազասարքավորումների անվտանգ շահագործմանը վերաբերող խորհրդատվություն,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում հորերում, անցումային կանալներում, փոսորակներում և բարձրությունների վրա կատարվող աշխատանքների տեխնոլոգիան,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում գործիքների և նյութերի միմյանց փոխանցման եղանակները տարբեր տեղամասերի համար,</p> <p>ժ. ճիշտ է օգտվում անհատական պաշտպանության սարքերից՝ հակագազ, փրկիչ գոտի, արտահագուստ և այլն:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-008
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել եռակցման աշխատանքային կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԳՍՇ 3-11-003 <<Էլեկտրական հոսանքը և դրա ջերմային ազդեցությունը, էլեկտրական երևույթները, սարքերն ու մեքենաները>>, ԳՍՇ 3-11-004 <<Նյութագիտություն: Վառելիքի տեսակները, բնական և արհեստական գազերը>>, ԳՍՇ 3-11-006 <<Կենսագործունեության անվտանգություն>> և ԳՍՇ 3-11-007 <<Փականագործական աշխատանքների տեխնոլոգիա>> մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Եռակցման աշխատանքների ընդհանուր նկարագրի իմացություն:
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում եռակցման աշխատանքների անհրաժեշտությունը գազասարքավորումների և գազահաշվիչների տեղակայման գործընթացներում,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում եռակցումը, որպես միացվող մետաղամասերի ծայրակցման, տաքացման ու սեղմման միագումար</p>

	<p>գործընթաց,</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում մետաղների եռակցման հատկությունները և դրանց վրա ազդող գործոնները,</p> <p>դ. ճիշտ է պատկերացնում մետաղների դասակարգումն՝ ըստ եռակցման հատկությունների,</p> <p>ե. ճիշտ է պատկերացնում եռակցման աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը և սահմանված ռեժիմները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում եռակցման սխեման և դրա հիմնական տարրերը,</p> <p>է. ճիշտ է բացատրում եռակցման միացությունների ձևերը՝ կցվանքային, անկյունային, տավրային և եզրածածկված,</p> <p>ը. ճիշտ է բնութագրում եռակցման աշխատանքներին ուղեկցող կենսագործունեության անվտանգության կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է թվարկում եռակցման տեխնոլոգիական տեսակները՝ ներկայացնելով եռակցման գործընթացի դասակարգումը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մետաղների եռակցումը հալումով և դրան համապատասխան աշխատանքային անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մետաղների եռակցումն էլեկտրատեխնիկական սարքավորումներով և դրան համապատասխան աշխատանքային անվտանգության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է նկարագրում մետաղների եռակցումը գազային սարքավորումներով և դրան համապատասխան աշխատանքային անվտանգության կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում հիմնական եռակցող սարքերն ու սարքավորումները և դրանց աշխատանքային սկզբունքները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում եռակցման աշխատանքներում օգտագործվող հարակից սարքերը, գործիքները և նյութերը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ածխածնային պողպատի, թուջի, լեգիրացված և գունավոր մետաղների եռակցման տեխնոլոգիաները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում կալցիումի կարբիդից ացետիլենի ստացման և ավտոգեն եռակցման գործընթացները,</p> <p>թ. ճիշտ է նկարագրում եռակցման աշխատանքներում ներգրավվածների աշխատանքային հանդերձանքի նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները, մասնավորապես, պաշտպանիչ դիմակների ճիշտ օգտագործման կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Էլեկտրատեռակցման աշխատանքների կազմակերպում, իրականացում և հսկում



<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. ճիշտ է պատկերացնում էլեկտրատեղակայման աշխատանքների բովանդակությունը և կառուցվածքը,  բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրատեղակայման ավտոմատ և ոչ ավտոմատ եղանակների սկզբունքային տարբերությունները,  գ. ճիշտ է ներկայացնում էլեկտրատեղակայման աշխատանքներում օգտագործվող եռակցման սխեմաները, տրանսֆորմատորները, գեներատորները, ուղղորդիչները, էլեկտրաբռնիչները, էլեկտրողները, լարերը և այլն,  դ. ճիշտ է ներկայացնում եռակցման կարերը, պաշտպանիչ գազերը և ֆյուսով կատարվող եռակցումը,  ե. ճիշտ է ներկայացնում հաստատուն և փոփոխական լարումով էլեկտրատեղակայման տեղամասի հիմնական սարքավորումները,  զ. ճիշտ է կատարում էլեկտրատեխնիկական եղանակով մետաղամասերի եռակցումը և կտրումը,  է. ճիշտ է պահպանում էլեկտրաանվտանգության կանոններն ու նորմերը,  ը. ճիշտ է գնահատում կատարված էլեկտրատեղակայման աշխատանքային արդյունքը,  թ. ճիշտ է ստուգում եռակցման կարերը և կատարում է ծայրակցված մետաղամասի ճիշտ փորձարկում,  ժ. ճիշտ է հաշվարկում ծախսված աշխատաժամանակը, աշխատանքային և նյութական ռեսուրսները,  ի. ճիշտ է ներկայացնում էլեկտրատեղակայման աշխատանքների ժամանակ աշխատանքի անվտանգության և պաշտպանության կանոնները:</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Գազատեղակայման աշխատանքների կազմակերպում, իրականացում և հսկում</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. ճիշտ է վերլուծում գազատեղակայման աշխատանքների բովանդակությունը և կառուցվածքը,  բ. ճիշտ է ներկայացնում գազատեղակայման աշխատանքներում օգտագործվող գազագեներատորները, գազաբալոնները, ճնշակարգավորիչները, մանոմետրերը, այրիչները, կտրիչները, թթվածնային ու ացետիլենային տարողությունները և այլն,  գ. ճիշտ է իրականացնում գազաճնշումային եղանակով մետաղամասերի եռակցումը և կտրումը,  դ. ճիշտ է ներկայացնում եռակցվող մասերի նախապատրաստման պահանջները և եռակցման կարին կից եզրերի մշակման տեխնոլոգիան,  ե. ճիշտ է գնահատում կատարված գազատեղակայման աշխատանքային արդյունքը,  զ. ճիշտ է ստուգում եռակցման կարերը և կատարում է ծայրակցված մետաղամասի ճիշտ փորձարկում,</p>

	<p>է. ճիշտ է հաշվարկում ծախսված աշխատաժամանակը, աշխատանքային և նյութական ռեսուրսները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում տեխնիկական պրոպանի ացետիլենային և թթվածնային բալոններին ներկայացվող պահանջները,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում եռակցման այրիչների և ճնշման կարգավորիչների կառուցվածքային առանձնահատկություններն ու աշխատանքային սկզբունքները,</p> <p>ժ. ճիշտ է ներկայացնում ճկափողերի շահագործման աշխատանքը,</p> <p>ի. ճիշտ է ներկայացնում գազաեռակցման ժամանակ օգտագործվող գազերի ու հեղուկների հետ վարվելու անվտանգության կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գազատար ցանցերում, գազակարգավորման կետերում և գազախողովակագծերում եռակցման աշխատանքների իրականացման կարգի իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում գազատար ցանցերի տեսակները և դրանցում եռակցման աշխատանքների կարգը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գազակարգավորման կետերի կառուցվածքը և դրանցում եռակցման աշխատանքների կարգը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում գազասպառման կետերի գազախողովակագծերի տեսակները և դրանցում եռակցման աշխատանքների կարգը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ապահովիչ փականի աշխատանքը,</p> <p>ե. ճիշտ է տարանջատում եռակցման կարերի տեսակներն աշխատանքային գծագրերի վրա,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում գազատար ցանցերում, գազակարգավորման կետերում և գազախողովակագծերում եռակցման աշխատանքների իրականացման կարգից բխող աշխատանքային անվտանգության կանոններն ու նորմերը:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-009
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել կենցաղային գազային սարքավորումների կառուցվածքին, տեղակայման և շահագործման պայմաններին ու նորոգման աշխատանքների հիմնական սկզբունքներին վերաբերող մասնագիտական (փաշկանագործական) գիտելիքներ և կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ

<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԸԱՀ 3-11-001 <<Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ>>, ԱԱՕ 3-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>>, ԳՍՇ 3-11-002 <<Տեխնիկական գրաֆիկա>>, ԳՍՇ 3-11-003 <<Էլեկտրական հոսանքը և դրա ջերմային ազդեցությունը, էլեկտրական երևույթները, սարքերն ու մեքենաները>>, ԳՍՇ 3-11-004 <<Նյութագիտություն: Վառելիքի տեսակները, բնական և արհեստական գազերը>>, ԳՍՇ 3-11-005 <<Չափագիտություն: Գծային, անկյունային և ֆիզիկական այլ մեծություններ>>, ԳՍՇ 3-11-006 <<Կենսագործունեության անվտանգություն>> և ԳՍՇ 3-11-007 <<Փականագործական աշխատանքների տեխնոլոգիա>> մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կենցաղային գազային սարքավորումների մասին ամփոփ իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային կենցաղային գազային սարքավորումները և դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կենցաղային գազային սարքավորումներից յուրաքանչյուրի տեսակները,</p> <p>գ. ճիշտ է թվարկում Հայաստանի Հանրապետության գազային տնտեսության կառուցվածքում առավել լայն տարածում գտած կենցաղային գազային սարքավորումների ապրանքանիշերը,</p> <p>դ. ճիշտ է պատկերացնում կենցաղային գազային սարքավորումների աշխատանքային հիմնական սկզբունքները,</p> <p>ե. ճիշտ է պատկերացնում կենցաղային գազային սարքավորումների տարբեր տեսակների գազասպառման միջին օրական, միջին ամսական և միջին տարեկան մոտավոր ծավալները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում կենցաղային գազային սարքավորումների տարբեր տեսակների փաստացի գազաձախսի հաշվարկման մեթոդները՝ կատարելով ճիշտ չափումներ և հաշվարկներ,</p> <p>է. ճիշտ է մեկնաբանում կենցաղային գազային սարքավորումների տեխնիկական անձնագրերում ամրագրված դրույթները,</p> <p>ը. ճիշտ է մեկնաբանում գազամատակարարի և գազասպառող բաժանորդի (բնակչի) միջև հաստատված պայմանագրային</p>

	պարտավորություններն ու իրավունքները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներբնակարանային (ներտնային) գազօջախների բնութագրում, տեղակայում, շահագործում և նորոգում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազօջախների հիմնական տեսակները, դրանց առավելություններն ու թերությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազօջախների կառուցվածքային առանձնահատկություններն ու ընդհանրությունները,</p> <p>գ. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) գազօջախների աշխատանքի ջերմատեխնիկական բնութագիրը,</p> <p>դ. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) գազօջախների աշխատանքի հիգիենիկ բնութագիրը,</p> <p>ե. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) գազօջախների աշխատանքի տեխնոլոգիական բնութագիրը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազօջախների տեղակայման պայմանները, կանոնները և կարգը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազօջախների շահագործման պայմանները, կանոնները և կարգը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազօջախների նորոգման աշխատանքները և դրանցում պահպանվող անվտանգության կանոններն ու նորմերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների բնութագրում, տեղակայում, շահագործում և նորոգում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների հիմնական տեսակները, դրանց առավելություններն ու թերությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների կառուցվածքային առանձնահատկություններն ու ընդհանրությունները,</p> <p>գ. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների աշխատանքի ջերմատեխնիկական բնութագիրը,</p> <p>դ. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների աշխատանքի հիգիենիկ բնութագիրը,</p>

	<p>ե. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների աշխատանքի տեխնոլոգիական բնութագիրը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների տեղակայման պայմանները, կանոնները և կարգը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների շահագործման պայմանները, կանոնները և կարգը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռոցային պահարանների նորոգման աշխատանքները և դրանցում պահպանվող անվտանգության կանոններն ու նորմերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների բնութագրում, տեղակայում, շահագործում և նորոգում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների հիմնական տեսակները, դրանց առավելություններն ու թերությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների կառուցվածքային առանձնահատկություններն ու ընդհանրությունները,</p> <p>գ. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների աշխատանքի ջերմատեխնիկական բնութագիրը,</p> <p>դ. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների աշխատանքի հիգիենիկ բնութագիրը,</p> <p>ե. ճիշտ է նկարագրում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների աշխատանքի տեխնոլոգիական բնութագիրը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների տեղակայման պայմանները, կանոնները և կարգը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների շահագործման պայմանները, կանոնները և կարգը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) ջեռուցման վառարանների նորոգման աշխատանքները և</p>

	դրանցում պահպանվող անվտանգության կանոններն ու նորմերը:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գազահաշվիչների և գազաազդանշանային (գազաազդանշանիչ) սարքերի տեղակայում ու շահագործում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազամատակարարման գազահաշվիչների տեսակները և կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազամատակարարման գազաազդանշանային սարքերի տեսակները և կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազամատակարարման գազահաշվիչների տեղակայման և շահագործման պայմանները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ներբնակարանային (ներտնային) գազամատակարարման գազաազդանշանային սարքերի տեղակայման և շահագործման պայմանները,</p> <p>ե. ճիշտ է մեկնաբանում և բացատրում ներբնակարանային (ներտնային) գազամատակարարման գազաազդանշանային սարքերի նշանակությունն ու անհրաժեշտությունը:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿՈՄՈՒՆԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՇ 3-11-010
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ կոմունալ-կենցաղային կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների գազամատակարարման համակարգերի սխեմաների ու շահագործվող սարքավորումների մասին, ինչպես նաև դրանց տեղակայանքների մոնտաժման, շահագործման, նորոգման և կարգաբերման աշխատանքների իրականացման մասնագիտական կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԸԱՀ 3-11-001 <<Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ>>, ԱԱՕ 3-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>>, ԳՍՇ 3-11-003 <<Էլեկտրական հոսանքը և դրա ջերմային ազդեցությունը,

	<p>էլեկտրական երևույթները, սարքերն ու մեքենաները&gt;&gt;, ԳՍՇ 3-11-005 &lt;&lt;Չափագիտություն: Գծային, անկյունային և ֆիզիկական այլ մեծություններ&gt;&gt;, ԳՍՇ 3-11-006 &lt;&lt;Կենսագործունեության անվտանգություն&gt;&gt;, ԳՍՇ 3-11-007 &lt;&lt;Փականագործական աշխատանքների տեխնոլոգիա&gt;&gt; և ԳՍՇ 3-11-008 &lt;&lt;Եռակցման աշխատանքներ&gt;&gt; մոդուլները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Կոմունալ- կենցաղային և արդյունաբերական ձեռնարկությունների գազամատակարարման համակարգերի իմացություն</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում գազամատակարարման համակարգերի սխեմաները, բ. ճիշտ է ներկայացնում գազամատակարարման ցանցերի ճնշումային ռեժիմները, գ. ճիշտ է մեկնաբանում ճնշման կարգավորիչների աշխատանքը, դ. ճիշտ է ներկայացնում գազամատակարարման համակարգերի հիմնական սարքավորումներին տրվող պահանջները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Կոմունալ-կենցաղային և արդյունաբերական ձեռնարկություններում շահագործվող գազասարքավորումների իմացություն</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է թվարկում արտադրական կաթսայատների գազի սնուցման համակարգի շահագործման սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական վառարանների գազի սնուցման համակարգի շահագործման սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում գազօջախային տաքացուցիչների գազի սնուցման համակարգի շահագործման սկզբունքները, դ. ճիշտ է նկարագրում կերակրի պատրաստման կաթսաների գազի սնուցման համակարգի շահագործման սկզբունքները, ե. ճիշտ է նկարագրում հացաթխման փռերի և ծխեցման վառարանների գազի սնուցման համակարգի շահագործման սկզբունքները, զ. ճիշտ է նկարագրում ջերմոցային տնտեսության գազի սնուցման համակարգի շահագործման սկզբունքները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կոմունալ-կենցաղային և արդյունաբերական ձեռնարկությունների գազօգտագործող սարքերի այրիչների իմացություն</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում կաթսաների այրիչների աշխատանքը, բ. ճիշտ է ներկայացնում գազա-մազուխային այրիչների աշխատանքը,</p>

	<p>գ. ճիշտ է ներկայացնում այրիչների տեսակներն՝ ըստ օդի խառնման,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ինֆրակարմիր այրիչների աշխատանքը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Գազատար ցանցերում կիրառվող խողովակների, անջատիչ-հսկիչ և այլ սարքավորումների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում մետաղական խողովակների կիրառման ոլորտը և խողովակների միացման եղանակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ոչմետաղական խողովակների կիրառման ոլորտը և խողովակների միացման եղանակները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում խողովակագծերի միացման դետալները և ձևավոր մասերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում խողովակագծերի վրա տեղադրվող փականները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում խողովակների վրա տեղադրվող օժանդակ սարքավորումները՝ հիդրավլիկ փական, կոմպենսատոր, կոնդենսատահավաքիչ, մեկուսիչ կցաշուրթ,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում չափիչ-հսկիչ սարքերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Արդյունաբերական ձեռնարկություններում հեղուկացված և սեղմված գազերի օգտագործման սկզբունքների իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է պատկերացնում հեղուկացված գազերով գազամատակարարման սխեման,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում սեղմված և հեղուկացված գազերով ավտոտրանսպորտում տեղադրվող տեղակայումների սխեմաները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ավտոմեքենաների գազալցավորման ճնշակայանի գազամատակարարման սխեման,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հեղուկացված և սեղմված գազերի օգտագործման ժամանակ անվտանգ շահագործման կանոնները:</p>



Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2915. <<Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում>> մասնագիտության <<Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ>> որակավորման օրինակելի ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2.	Օտար լեզու		90	60	1
3.	Պատմություն		54	36	1
4.	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
5.	Իրավունքի հիմունքներ		54	36	1
6.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		54	36	1
7.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		54	36	1
8.	Ֆիզիկական կուլտուրա		64	64	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>508</b>	<b>340</b>	
	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				
1.	Հաղորդակցություն		54	36	1
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		81	54	1
4.	Համակարգչային օպերատորություն		108	72	1

	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>297</b>	<b>198</b>	
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Գազային տնտեսություն		81	54	1
2.	Տեխնիկական գրաֆիկա		54	36	1
3.	Էլեկտրական հոսանքը և դրա ջերմային ազդեցությունը, էլեկտրական երևույթները, սարքերն ու մեքենաները		81	54	1
4.	Նյութագիտություն: Վառելիքի տեսակները, բնական և արհեստական գազերը		81	54	1
5.	Չափագիտություն: Գծային, անկյունային և ֆիզիկական այլ մեծություններ		81	54	1
6.	Կենսագործունեության անվտանգություն		54	36	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>432</b>	<b>288</b>	
	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Փականագործական աշխատանքների տեխնոլոգիա		108	72	1
2.	Եռակցման աշխատանքներ		108	72	1
3.	Կենցաղային գազային սարքավորումներ		108	72	1
4.	Կոմունալ-կենցաղային կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների գազասարքավորումներ		108	72	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>432</b>	<b>288</b>	
	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		<b>20</b>	<b>20</b>	1
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>		<b>27</b>	<b>18</b>	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>32</b>	<b>1716</b>	<b>1152</b>	
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>		<b>100</b>	<b>100</b>	
	<b>ՊՐԱԿՏԻԿԱ</b>	<b>8</b>			
	<b>ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>	<b>2</b>			
	<b>ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>	<b>1</b>			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>43</b>			